ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՀԱԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Վահագնաձոր 1 փողոց 8 Հեռ. 093-014-292
էլ. փոստ *vahagnadzor*.lori@mta.gov.am

27-41

«27» Փետրվարի 2018թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Վահագնաձոր համայնքի ղեկավարի 2018թվականի մարտի 13-ի թիվ 6-Ա և 7-Ա որոշումը:

Առդիր 8 թերթ

ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Վահագնաձոր Հեռ. 093-014-292
փոստ vahagnadzor.lori@mta.gov.am

էլ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» Մարտի 2018 թվականի N 6-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դ) կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքում հաստատել.

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը ՝ համաձայն հավելված N 2-ի.

2. Խորհրդի անդամներին՝

1) մինչև սույն թվականի մայիսի 15-ը մշակել Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

2) յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալին՝ սույն որոշման 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ

2018 թ.մարտի 13

հ. Վահագնաձոր

Հավելված N 1
Վահագնաձոր համայնքի ղեկավարի
«13» մարտի 2018թ-ի N 6-Ա որոշման

ԿԱԶՄ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի ԱՌԿ խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Եղոյան Էդիկ /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Դիլոյան Աննա /աշխատակազմի քարտուղար/,
3. խորհրդի քարտուղար՝ Եղոյան Արմեն,
4. խորհրդի անդամներ՝
   1) ավագանի Ղազարյան Արշակ,
   2) ավագանի Ղուկասյան Միեր,
   3) ավագանի Օհանյան Սեյրան,
   4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Եղոյան Էդիկ ,
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Եղոյան Էդիկ,
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Եղոյան Էդիկ,
դ. կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու՝ Եղոյան Թամարա,
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Թամազյան Նաիրա,
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Եղոյան Էդիկ,
է. կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Եղոյան Էդիկ,
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Եղոյան Էդիկ,
թ. դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝ Եղոյան Էդիկ,,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Եղոյան Էդիկ:

ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ

Հավելված N 2
Վահագնաձոր համայնքի ղեկավարի
«13» Մարտի 2018թ-ի N 6-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Վահագնաձոր համայնքի ԱՌԿ խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Վահագնաձորի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ Համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող բաժինների համար, ինչպես նաև Համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենք կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի նախապատրաստական գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) իրականացնում են համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտում,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) ԱՌՆ և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) Համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածմանը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստում է Համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) իրականացնում է հրդեհների կանխարգելման աշխատանքներ՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) կազմակերպում և անցկացնում է վարժանքներ:

2. ԱՌԿ խորհրդի արձագանքման գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) Համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխումը,

8) շինարարական աղբի տեղափոխումը,

9) ճանապարհների մաքրումը և նոր տարանցիկ ճանապարհների հիմնումը,

10) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրում համայնքի տարածքից ու ճանապարհներից, նոր տարանցիկ ճանապարհների հիմնում, կամուրջների վերականգնում,

11) առաջին օգնության իրականացումը,

12) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողություն,

13) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

14) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը:

15) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

16) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցումը,

17) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպումը,

18) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերումը, գրանցումը և ուղղորդումը համապատասխան սոցիալական ծառայություններ,

19) կազմակերպում է երեխաների վերամիավորումն ընտանիքներին:

20) աղետից հետո կազմակերպում է ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատումը,

21) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Վահագնաձոր Հեռ. 093-014-292
էլ. փոստ *vahagnadzor*.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» Մարտի 2018 թվականի N 7-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին»,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2018թվականի փետրվարի 8 թիվ 35-Ա որոշման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի տարածքում 2018թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի տարածքում 2018թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. 1) Համայնքի 2018թվականի բյուջեում նախատեսել գումարներ՝ բնական երևույթների և տարերային աղետների կանխարգելմանը և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների համար և մինչև 01.03.2018թվականը տվյալները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:

2) Յուրաքանչյուր ամիս մինչև այդ ամսվա 25-ը ներկայացնել տեղեկատվություն՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

3) Մինչև սույն թվականի մարտի 1-ը կազմել «Համայնքի տարածքում 2018թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման» միջոցառումների պլան և ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն՝ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

3. Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին՝ 2018թվականի ընթացքում պարբերաբար քննարկել Վահագնաձոր համայնքի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը և կազմել տեղեկանքներ:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Վահագնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ

2018թ. Մարտի 13
հ. Վահագնաձոր

Հավելված 1.
Վահագնաձոր համայնքի ղեկավարի
2018թ. մարտի 13-ի թիվ 7-Ա որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

Հ/Հ	Միջոցառումների անվանումները	Կատարող	Կատարման ժամկետը
1	2	3	4
	1. Կանխարգելիչ միջոցառումներ		
1.	ՈՒսումնասիրել և գնահատել գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Համայնքի ղեկավար	Մինչև 15.03.2018թ.
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:		
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		Մինչև 15.03.2018թ.
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		Մշտական
5.	Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը գետերի ջրի, ջրամբարների մակարդակի բարձրացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Համայնքի ղեկավար	Ամեն օր, սկսած 01.03.2018թ.
6.	Նախապատրաստել համապատասխան քանակի տրանս-պորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար:	Համայնքի ղեկավար	Մինչև 15.03.2018թ.
7.	Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տու-ժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կատարելու համար:	Համայնքի բուժաշխատող	Մինչև 15.03.2018թ.
8.	Պատրաստ վիճակի բերել համայնքային	Համայնքի	Մինչև

1	2	3	4
	կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:	ղեկավար	15.03.2018թ.
	2. Հիմնական միջոցառումներ		
9.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	համայնքի ղեկավար	Մշտապես
10.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում
11.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Տարահանման հանձնաժողովի նախագահ,	Անհրաժեշտության դեպքում
12.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Համայնքի ղեկավար	Ըստ անհրաժեշտության
13.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում

ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՀԱԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Վահագնաձոր 1 փողոց 8 Հեռ. 093-014-292
էլ. փոստ *vahagnadzor*.lori@mta.gov.am

27-42

«27» Փետրվարի 2018թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Վահագնաձոր համայնքի ղեկավարի 2018թվականի մարտի 13-ի թիվ 8-Ա, որոշումը:

Առդիր 9 թերթ

ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՀԱԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Վահագնաձոր Հեռ. 093-014-292
էլ. փոստ *vahagnadzor*.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» Մարտի 2018 թվականի N 8-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ, ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի №46-Ն որոշման հավելված 1-ի 18-րդ և 19-րդկետերովլ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 26-ի նիստի №45 արձանագրային որոշման 5-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի2018թվականի հունվարի 23-ի թիվ 101/107.4/373-18 գրությունը

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի կազմակերպական ցուցումներն ու ուղղությունները՝ համաձայն հավելված 1-ի.

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելված 2-ի:

2.Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համաձայնեցնել ու հաստատել Վահագնաձոր համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2018 թվականի նախապատրաստման կազմակերպական ցուցումները, ուղղությունները և հիմնական միջոցառումների պլանը:

ՎԱՀԱԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ

2018թ. Մարտի 13
հ. Վահագնաձոր

Հավելված 1.
ՀՀ Լոռու Վահագնաձոր համայնքի ղեկավարի
2018թ. մարտի 13-ի թիվ 8-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակներում Վահագնաձոր համայնքի բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2018 թվականի նախապատրաստման հիմնական խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացումը.

2) գիտելիքների, մասնագիտական ունակությունների և հմտությունների կատարելագործումն ու կարողությունների զարգացումն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության բնագավառներում.

3) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում կապի ու ազդարարման համակարգի զարգացումը.

4) արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և արտակարգ իրավիճակների կանխման ու հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

5) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության, տեխնիկական անվտանգության և սեյսմիկ պաշտպանության բնագավառներում միջազգային փորձի ուսումնասիրությունն ու համագործակցության ընդլայնումը.

6) տարածքային պաշտպանության համակարգի ձևավորմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

7) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման նպատակով տրանսպորտային միջոցների ապահովման նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

2. Ըստ բնագավառների 2018 թվականի հիմնական խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում՝

ա. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի ուժերի և միջոցների պատրաստականության ապահովումն արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար.

բ. մարդուն հրատապ օգնության ցուցաբերման համապետական համակարգի ներդաշնակ և հուսալի աշխատանքի կազմակերպումը.

2) քաղաքացիական պաշտպանության բնագավառում՝

ա. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքում գործող ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից քաղաքացիական պաշտպանության պլանների և տարահանման պլանների ճշգրտումը (մշակումը).

բ. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի տարածքում առկա պաշտպանական կառույցների ցանկի ճշգրտումը, հնարավորության դեպքում դրանց վերանորոգման աշխատանքների իրականացումը և համապատասխան գույքով ու տեխնիկական սարքավորումներով կահավորումը.

գ. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի բնակչության պատսպարման նպատակով համապատասխան շինությունները թաքստոցների ձևափոխման և նորերի կառուցման պլանավորումը.

դ. տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման գործընթացների կազմակերպումն ու իրականացումը.

3) հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում՝

ա. հրդեհների և դրանց հետևանքով հնարավոր մարդկային զոհերի թվի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը, հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների իրականացման կարողությունների զարգացումը.

բ. հրդեհային անվտանգության ապահովման հարցերի ուղղությամբ, ըստ անհրաժեշտության՝ նորմատիվ-իրավական ակտերի մշակման և լրամշակման աշխատանքների իրականացումը.

4) ջրային տարածքներում (լճերում, գետերում, ջրամբարներում, լողավազաններում) մարդկանց անվտանգության ապահովման բնագավառում՝

ա. ջրային տարածքներում մարդկանց անվտանգության ապահովման ուղղությամբ հսկողության արդյունավետության բարձրացումը.

բ. ջրային տարածքներում մարդկանց անվտանգության ապահովման հարցերի ուղղությամբ նորմատիվ-իրավական բազայի ստեղծումը և զարգացումը.

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերում ընդգրկված մարմինների նախապատրաստման հիմնական ցուցումներն են՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտում գործող նորմատիվա-իրավական ակտերի պահանջների կատարումը:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձորի համայնքապետարանի նախապատրաստման հիմնական ուղղություններն են՝

1) ուժեղ երկրաշարժի դեպքում համայնքի գործողությունների պլանի ճշգրտումը.

2) համայնքի տարածքում հաշվառած հակաճառագայթային թաքստոցների և առկա պաշտպանական կառույցների ցանկի ճշգրտումը.

3) համայնքի բնակչության ազդարարման համակարգի ստեղծումը և պատրաստ վիճակի պահպանումը.

4) համայնքի բնակչության պատսպարման նպատակով թաքստոցների կառուցման պլանավորումը.

5) Համայնքի բնակչությանը պաշտպանական կառույցներին ամրագրումը.

6) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

7) Համայնքային մակարդակում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում ճգնաժամային կառավարման գործընթացի ձևավորումը.

8) նախադպրոցական ուսումնական հաստատություններում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների ներդրման աշխատանքներին աջակցությունը:

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի պատրաստման առաջարկվող ուղղություններն են՝

1) ուժեղ երկրաշարժի դեպքում Վահագնաձոր համայնքի գործողությունների պլանի ճշգրտումը.

2) Վահագնաձոր համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառին առնչվող փաստաթղթերի և պլանների վերամշակումը.

3) Վահագնաձոր համայնքի տարածքում հաշվառված հակաճառագայթային թաքստոցների և առկա պաշտպանական կառույցների ցանկի ճշգրտումը.

4) Վահգանաձոր համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումների իրականացումը.

5) Վահագնաձոր համայնքի բնակչության ազդարարման համակարգի ստեղծումը և պատրաստ վիճակի պահպանումը.

6) սահմանամերձ համայնքների բնակչության պատսպարման նպատակով թաքստոցների կառուցման պլանավորումը.

7) Վահագնաձոր համայնքի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցներին ամրագրված բնակչության տեղեկացումը.

8) քաղաքացիական պաշտպանության պլանների և տարահանման պլանների ճշգրտումը (մշակումը).

9) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

10) աջակցությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների ներդրման աշխատանքներին:

6. Կազմակերպությունների նախապատրաստման առաջարկվող ուղղություններն են՝

1) հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների համար՝ արտակարգ իրավիճակի հնարավոր վտանգավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության ազդարարման համակարգի ստեղծումը.

2) քաղաքացիական պաշտպանության պլանների և տարահանման պլանների ճշգրտումը (մշակումը).

3) կազմակերպության աշխատակիցների պատսպարման միջոցառումների պլանավորումը.

4) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

III. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերում ընդգրկված մարմինների պատրաստմանն ուղղված միջոցառումները պլանավորվում ու անցկացվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի №46-Ն որոշման:

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերում ընդգրկված մարմինների կողմից մշակվող համապատասխան հիմնական միջոցառումների պլաններում ընդգրկված բոլոր միջոցառումների համար հստակ նշվում են անվանումները (թեմաները), կատարման ժամկետները, պատասխանատուները, կատարողները և մասնակիցները:

9. Ուսումնավարժությունների և վարժանքների պլանավորման ընթացքում նախատեսվող միջոցառումներն ուղղվում են կառավարման մարմինների և ուժերի տարբեր պատրաստականության աստիճանների բերմանը, արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև ռազմական գործողությունների վարման ընթացքում կամ այդ գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը, կառավարման մարմինների միջև փոխհամագործակցության իրականացմանը:

10. Ուսումնավարժությունների և վարժանքների թեմաները որոշվում են՝ ելնելով տարածաշրջանի, ինչպես նաև համապատասխան ոլորտի առանձնահատկություններից և առաջադրված խնդիրներից:

11. Ուսումնավարժությունների և վարժանքների անցկացման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում արտակարգ իրավիճակներում գործելու, քաղաքացիական պաշտպանության պլանների և տարահանման պլանների իրատեսական լինելուն:

IV. ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

12. Փրկարար ուժերի պատրաստությանն ուղղված խնդիրներն են՝

1) ուժերի մշտական պատրաստականության ապահովումը.

2) մասնագիտական մակարդակի պահպանումը և բարձրացումը:

13. Փրկարար ուժերի և փրկարարների մշտական պատրաստականությունն ապահովվում է պարապմունքների, ուսումնամարզական հավաքների, հատուկ

տակտիկական ուսումնավարժությունների և վերապատրաստման միջոցով, ինչպես նաև ուսումնավարժություններին և վարժանքներին նրանց ներգրավելու ճանապարհով:

14. Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների պատրաստմանն ուղղված խնդիրներ են՝

1) քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծումը, նախապատրաստումը, տեսական գիտելիքների բարձրացումը և մասնագիտական ունակությունների կատարելագործումը.

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից մեթոդական օգնության ցուցաբերումը քաղաքացիական պաշտպանության կազմավորումների նախապատրաստման հարցերով.

3) քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ղեկավար կազմի և անձնակազմի ուսուցման գործընթացում գործնական պարապմունքների նախատեսումը և իրականացումը:

ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի ղեկավարի
2018թ. Մարտի 13-ի թիվ 8-Ա որոշման

Պ Լ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ ը/կ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ	Մասնակիցներ	Նշումներ
1	2	3	4	5	6	7
Ի ՀՀ ԱԻՆ ՓԾ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ						
1. Օպերատիվ տակտիկական պատրաստություն						
1.1. Հրամանատարաշտաբային ուսումնավարժություն						
1.2.						
1.1.1	Մասնակցություն պետական և ռազմական կառավարման մարմինների հետ անցկացվող ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությանը	10-15.09	Վահագնաձոր համայնքի ղեկավար	Վահագնաձորի համայնքապետարան		
1.2. Շտաբային ուսումնավարժություն						
1.2.1	Մասնակցություն բուսածածկ տարածքների հրդեհների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման թեմաներով ուսումնավարժությունների, վարժանքների, սեմինարների և խորհրդակցությունների անցկացմանը՝ ընդգրկելով բնակչությանը, շահագրգիռ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու կազմակերպություններին	Տարվա ընթացքում	Վահագնաձոր համայնքի ղեկավար	Վահագնաձորի համայնքապետարան		

1	2	3	4	5	6	7
	2. Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ					
2.1.	Մասնակցություն ՀՀ Լոռու մարզի Վահագնաձոր համայնքը , տնտեսական արժեք ներկայացնող տարածքներն ու բնակչության գույքը գետերի, ջրերի վարարումների և սելավների ռիսկերից պաշտպանելու նպատակով առաջարկությունների ներկայացմանը	Մինչև 01.03	Վահագնաձոր համայնքի ղեկավար	Վահագնաձորի համայնքապետարան		
2.2.	Մասնակցություն ՀՀ Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի տարածքում գարնանային վարարումների ժամանակահատվածում գետերի հոսքերի (ջրամբարներում ջրի մակարդակի) վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության և ՀՀ ԱԻՆ հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության կանխատեսումների հիման վրա հրատապ կանխարգելիչ միջոցա-ռումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը	Մարտ-հունիս	Վահագնաձոր համայնքի ղեկավար	Վահագնաձորի համայնքապետարան, ՄՓՎ համապատասխան ստորաբաժանումներ		
	3. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ					
3.1.	Մասնակցություն ՀՀ ԱԻ նախարարի 15.06.2015թ. «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 582-Ա հրամանով ՀՀ Լոռու մարզում միջազգային կազմակերպությունների կողմից հասարակական կամավորական փրկարարական շարժման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված ծրագրերի ու աշխատանքների կատարման ընթացքի մասին տեղեկատվության ներկայացմանը	04.07 21.12	Վահագնաձոր համայնքի ղեկավար	ՀՀ Լոռու մարզի Վահագնաձորի համայնքապետարանի աշխատակազմ և ՄՓՎ համապատասխան ստորաբաժանումներ		
	4. Պլանների և ծրագրերի մշակում					
4.1	Մասնակցություն ՀՀ ԱԻ նախարարի 2014թ.	Առանձին	Վահագնաձոր	Վահագնաձոր		

1	2	3	4	5	6	7
	նոյեմբերի 4-ի «ՀՀ տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման և զարգացման հայեցակարգի իրականացման միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող ՀՀ ԱԻՆ միջոցառումների ցանկը հաստատելու մասին» №1016-Ա հրամանով սահմանված միջոցառումների կատարմանը	պլան-ժամանա-կացույցով	համայնքի ղեկավար	համայնք ՄՓՎ ստորաբաժանումներ		
4.2	Մասնակցություն ՀՀ ԱԻ նախարարի 2015թ. փետրվարի 27-ի «Անտառային հողերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և բնակավայրերում բուսածածկ տարածքների հրդեհների կառավարման ազգային քաղաքականության իրագործման միջոցառումների ցանկից բխող ՀՀ ԱԻՆ միջոցառումների պլան-ժամանակացույցը հաստատելու մասին» № 163-Ա հրամանով սահմանված միջոցառումների կատարմանը	Առանձին պլան-ժամանա-կացույցով	Վահագնաձոր համայնքի ղեկավար	Վահագնաձոր համայնք ՄՓՎ ստորաբաժանումներ		

ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ԵՂՈՅԱՆ